



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ
 ՆԱԽԱՐԱՐ
 Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
 « 14 » 08 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՈՒՄԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000062

Ձեռնարկողը՝

«Արբակ և որդիներ» ՍՊԸ
 ք. Երևան, Նորագավիթ, Արտաշատի խճ. 66

Գործունեությունը՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով փողոցի 17 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000062

<<14>> 08 2020թ.

Երևան քաղաքի Արաբկի վարչական շրջանի Գրիբոյեդովի փողոցի 17 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝

«Արբակ և որդիներ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Երևան համայնք, Արաբկիր վարչական
շրջան

«Արկադա քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Արաբկի վարչական շրջանի Գրիբոյեդովի փողոցի 17 հասցեում բնակելի թաղամասի կառուցում:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Բնակելի թաղամասի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդովի 17 հասցեում, նախկին ավտոպարկի տարածք է: Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է: Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող՝ 2.1174 հա ընդհանուր մակերեսով հողամասում, Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա: Հողամասի նպատակային նշանակությունը փոխադրվել է բնակավայրերի է, գործառնական՝ բնակելի կառուցապատման: Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բնակելի թաղամաս:

Նկարագրական մաս.



Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքը կառուցապատված է չգործող խարխուլ վիճակում գտնվող միահարկ քանդման ենթակա շինություններով, ամբողջությամբ ասֆալտապատ է, բուսականությունը բացակայում է:

Ըստ ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության՝ միկրոսեյսմերով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից երևում է, որ տարածքի գրունտները, համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006-ի նորմերի՝ աղյուսակ 3-ի, համապատասխանում են սեյսմիկ առաջին կարգի գրունտերին: Մինչև 30մ խորության վրա գրունտային ջրերը բացակայում են: Տարածքը կառուցապատված է չգործող խարխուլ վիճակում գտնվող միահարկ քանդման ենթակա շինություններով, ամբողջությամբ ասֆալտապատ է, բուսականությունը բացակայում է: Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի գործունեության ենթակա տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Շինարարական աշխատանքները տևելու են 36 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոկոունկ, բեռնատար ինքնաթափ, բետոնամղիլ ավտոմոբիլ, էքսկավատոր, շարժական կոմպրեսոր, եռակցման սարք, ձեռքի էլեկտրական և մեխանիկական գործիքներ, ատաղձագործական և ներկարարական գործիքներ: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր և այլն: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահեստավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ: Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 135700 մ³ ծավալով հողային զանգված, որից 41500մ³-ը ժամանակավոր կուտակվելու և պահվելու է շինհրապարակում՝ հետ լիցքի համար օգտագործելու նպատակով: Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային(1200-1300 կգ) և շինարարական աղբի(3956մ³) տեսքով: Շինարարության ընթացքում առաջացած շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբավայր: Բնակելի թաղամաս շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Կանաչապատ տարածքների ոռոգուման ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:



Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1959.12 մ³/շին. ժամ: Շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավվելու են 70 մարդ:

Կառուցապատման մակերեսը կազմելու է 6808.0մ²(32.2%): Բնակելի թաղամասը բաղկացած է 6 բնակելի շենքից: Ներկայացված 6 տիպի շենքերը՝ Բլոկ 1x2, Բլոկ 2x2 և Բլոկ 3x2, իրականացված են տեռասաձև կառուցապատմամբ, որոնց հարկայնությունը տատանվում է 12-16 հարկ: Շինության առաջին հարկն ամբողջությամբ նախատեսվում է տրամադրել հասարակական նշանակության օբյեկտներին: Թաղամասի ստորգետնյա հատվածում նախագծված է երկհարկանի ընդարձակ ավտոկայանատեղի, որի ընդհանուր մակերեսը կազմում է 17,780 ք.մ. և նախատեսված է թվով 360 մեքենայի կայանման համար:

Արտաքին ջրամատակարարման և կենցաղային կոյուղու ցանցերի նախագիծը մշակված է ըստ պատվիրատուի տրված առաջադրանքով «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարումը կատարվելու է Հ. Արդուրյան փողոցով անցնող անցնող D=400մմ ջրատարից, իսկ կոյուղագիծը միացվելու է Մամիկոնյանց փողոցով անցնող D=700 մմ տրամագծի կոյուղատարին: Բնակելի համալիրի գազամատակարարումը և էլեկտրամատակարարումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

Բնակելի համալիրի ջերմամատակարարումն իրականացվելու է անհատական ջեռուցման կաթսաներով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման մակերեսն է 8560.0 ք.մ, որը կազմում է հողակտորի 40.5 % - ը: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Համաձայն կանաչապատման նախագծի (դենդրոնախագիծ) տարածքում տնկվելու են՝ 36 հատ փովող գիհի, 30 հատ սյունաձև թույա, 40 հատ գնդաձև ակացիա, 8 հատ արծաթափայլ եղևնի, 29 հատ գոյություն ունեցող բարդի, 9000 հատ ցանկապատի թփեր, 6 հատ վերափոխվող այլանտ, 8000ք.մ սիզամարգ:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Կանաչապատ տարածքների ոռոգման համար նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի միանալով մոտակայքով անցնող ոռոգման ջրագծին: Ոռոգման ջրապահանջը կազմելու է 17976 մ³/ տարի: Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,



- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

- ինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին Առողջապահության նախարարությունը, «Հիդրոտեխնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը Քաղաքաշինության կոմիտեն:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի Ռոստոմի 29/առաջին լսում/ և Գրիբայեդով 17 հասցեում/երկրորդ լսում/ իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:

3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:



4. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

5. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

6. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Արաբկի վարչական շրջանի Գրիբոյեդովի փողոցի 17 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Վ. Ռախյան